ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՎՊՊ-ՄԱԱՇՁԲ -21/6

Ք.Վանաձոր « 16 » « 02 » 2021 թ.

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՊՓԲԸ-ն , ի դեմս տնօրեն Ս.Բալայանի , որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և «Արմեն Տեր-Մովսիսյան» ԱՁ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արմեն Տեր-Մովսիսյանի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված տպագրական աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Աշխատանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Աշխատանքը հասցնում է Գնորդին:

2.2 Աշխատանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան եւ ժամկետը սահմանվում է առնվազն 30 աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում: Բացառության այն դեպքերի, երբ վաճառողը համաձայնվում է կատարել ապրանքի մատակարարում պատվերի պատշաճ ձեւով ստանալուց հետո առնվազն հինգ աշխատանքային օրում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Աշխատանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Աշխատանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Աշխատանք.

ա) Չընդունել Աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Աշխատանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Աշխատանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Աշխատանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Աշխատանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Աշխատանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Աշխատանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Աշխատանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Աշխատանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Աշխատանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Աշխատանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Աշխատանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Աշխատանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Աշխատանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Աշխատանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Աշխատանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Աշխատանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Աշխատանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Աշխատանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Աշխատանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Աշխատանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Աշխատանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Աշխատանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Աշխատանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Աշխատանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Աշխատանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ 980750/ ինը հարյուր յոթանասուն հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ : Յուրաքանչյուր Աշխատանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N1 հավելվածում: Աշխատանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Աշխատանքի դիմաց վճարում է համաձայն N1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցի անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է N2 հավելվածով հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում: Եթե ընդունված Աշխատանքի համար վճարելու նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա կողմերի համաձայնությամբ վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Աշխատանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Աշխատանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող Աշխատանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Աշխատանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Աշխատանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ :

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Աշխատանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կարող է գանձվել տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Աշխատանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից կարող է գանձվել տուգանք Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը ,տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար կարող է հաշվարկվել տույժ՝ վճարման ենթակա չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից եւ գործում է մինչեւ 30.12.21 թ.:

9.2 Հիմնական միջոց հանդիսացող Աշխատանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշվում են և դրանց փոփոխությունը գնահատվում է հետևյալ կերպ. փոխադարձ քննարկումների արդյունքում:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքների ծավալների, ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Աշխատանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է --5-- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N N 1, 2, հավելվածները՝ բաղկացած ----- թերթից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.9 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

11.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ Ք.Վանաձոր, Մյասնիկյան 7 <Արդշինինվեստբանկ >Վանաձոր մ/ղ	« Արմեն Տեր-Մովսիսյան» ԱՁ ք. Վանաձոր, Սայաթ Նովա 16 ՀՎՀՀ 81714825 «Էվոկա բանկ» ԲԲԸ Վանաձորի մ/ճ Հ/Հ 1660004058100100 jimbashyan@gmail.com Հեռ. 094-64-20-64
Հ/Հ 247170009663 ՀՎՀՀ 06907013	
Տնօրեն՝ Ս.Բալայան ստորագրություն Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 1

ՑԱՆԿ

	ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	Չափմ. միավ. հատ	Քանակ	Գին	Գու մար
1	Դեռահասի /18տ./փոխադրման եզրակացության տիպային ձև	A4 1 երես ՕՖ60գ	800	5,5	4400
2	Առողջության անձնագիր /ամբուլատոր պոլիկլինիկական հաստատության կողմից տրվող/	A4 1 երես ՕՖ60գ	1300	5,5	7150
3	Առողջության առաջնային պահպանման ծառայությունների մատուցման հաշվառման ձև 002	A4 1 երես ՕՖ60գ	37000	5	185000
4	Առողջության առաջնային պահպանման ծառայություններ մատուցող բժշկի ընտրությանը վավերացնող գրանցման ձև	A4 1 երես ՕՖ60գ	1300	5,5	7150
5	Մինչև 18տ. տարիքի անձանց բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր	A4 2 երես ՕՖ60գ	100	5,5	550
6	18տ. և բարձր տարիքի անձանց բժշկասոցիալական փորձաքննության ուղեգիր համարակալված	A4 2 երես ՕՖ60գ	100	5,5	550
7	Պահանջագիր ձև N2	A5 2 երես ՕՖ60գ	1300	2	2600
8	Երեխայի / աղջիկ տղա / բժշկական հսկողության ամբուլատոր քարտ	Կազմ Խրոմ 300գ Միջուկ ՕՖ60գ	1000	170	170000
9	Մեծահասակի ամբուլատոր բժշկական քարտ	Կազմ Խրոմ 300գ Միջուկ ՕՖ60գ	1300	150	195000
10	Շտապ հաղորդում Ձև 058-ու	A5 2 երես ՕՖ60գ	1000	2	2000
11	Արյան անալիզի ձևաթուղթ Ձև N224	A5 1 երես ՕՖ60գ	7500	2	15000
12	Կանխարգելիչ պատվաստումների Ձև N063	A3 1 երես ՕՖ60գ	1300	35	45500
13	Քաղվածք /մեծահասակ ամբուլատոր քարտից /	A5 1 երես ՕՖ60գ	1300	2	2600
14	Քաղվածք /մանկական ամբուլատոր քարտից /	A5 2 երես ՕՖ60գ	2800	2	5600
15	Մեզի անալիզ ձևաթուղթ	A6 1 երես ՕՖ60գ	8000	1	8000
16	Արյան բիոքիմիական անալիզի ձևաթուղթ	A6 1 երես ՕՖ60գ	13000	1	13000
17	Ուղեգիր / մասնագիտական խորհրդատվության կամ լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների /	A5 1 երես ՕՖ60գ	1300	2	2600
18	Ամբուլատոր քարտի միջուկ / մեծահասակի /	1/2A3 2 երես ՕՖ60գ	1800	15	27000
19	Կղանքի անալիզի ձևաթուղթ	A6 1 երես ՕՖ60գ	1800	1	1800
20	Դեղատոմս / սովորական / Դեղատոմսային ձևաթուղթ N3	A5 2 երես ՕՖ60գ	6000	2	12000
21	Բժշկական քարտ 026 ձև	A5 1 երես ՕՖ60գ	1300	40	52000
22	Դեղատոմս անվճար ինքնապատճեով և համարակալված	A5 1 երես ՕՖ60գ	6500	9	58500
23	Ուղեգիր հավելված 6	A6 1 երես ՕՖ60գ	24000	1	24000
24	Տիպային մատյաններ	100թերթ	20	700	14000

25	Տիպային գրքեր կոշտ կազմով	200թերթ	5	2000	10000
26	Աշխատողի անհատական քարտ	A4 2 երես Խրում 300գ.	100	20	2000
27	Վիճակագրական կտրոն Ձև 25-ու	A5 2 երես ՕՖ60գ	2800	2	5600
28	Վիճակագրական կտրոն	A6 1 երես ՕՖ60գ	1300	1	1300
29	Քանակագումարային գիրք	100թերթ	8	900	7200
30	Դրամարկղի գիրք				
31	Դիսպանսեր քարտ Ձև 30	A4 2 երես Խրում 300գ.	500	20	10000
32	Պարբերական զննման գրանցման թերթիկ	A4 - 2 երես	300	5	1500
33	Լիազորագիր համարակալված	A 6 2 երես ՕՖ60գ	50	1	50
34	Գրասենյակային գիրք	100 թերթ	80	450	36000
35	Հակակատաղության օգնության դիմողի քարտ	A4 - 2 երես	300	5	1500
36	Քարտի անկետայի կազմ / ֆուդբորտ300 գր/	1A3	800	20	16000
37	Պ1,Պ2,Պ3,Պ4 հայտի թուղթ	A4 - 2 երես	120	5	600
38	Հայտ	A4 - 2 երես	1000	5	5000
39	Սոց փաթեթի շահառու	A5	1000	2	2000
40	Պրոֆ.զննման ձև 39	A4 - 1 երես	1000	5	5000
41	Նախազորակոչիկների բլանկ	A4 - 1 երես	1000	5	5000
42	Զորակոչիկների բլանկ	A4 - 1 երես	800	5	4000
43	Էսգ բլանկ		6000	2	12000
	ԸՆԴԱՄԵՆԸ				**980750**

- Մատակարարումը իրականացվելու է փետրվարի 15-ից հունիսի 1-ը:

ԳՆՈՐԴ

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա » ՓԲԸ
Ք.Վանաձոր, Մյասնիկյան 7
<Արդշինինվեստբանկ >Վանաձոր մ/ղ

ՀՎՀ 247170009663
ՀԿՀՀ 06907013

Տնօրեն՝ Ս.Բայայան
Կ.Տ
ստորագրություն

ՎԱՃԱՌՈՂ

« Արմեն Տեր-Մովսիսյան» ԱՁ
ք. Վանաձոր, Սայաթ Նովա 16
ՀՎՀՀ 81714825
«Էվոկա բանկ» ԲԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 1660004058100100
jimbashyan@gmail.com
Հեռ. 094-64-20-64

(ստորագրություն)
Կ.Տ.